

## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՐ ԱՐԵՐՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## **WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: <a href="mailto:info@westernprelacy.org">info@westernprelacy.org</a> Website: <a href="mailto:www.westernprelacy.org">www.westernprelacy.org</a>



## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵԼ ՊՇԱՐԱ ՌԱՅԻ ՊԱՑՐԻԱՐՔ ՅԱՆԴԻՊՈԼՄ ՈԼՆԵՑԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Շաբաթ, 15 Յոկտեմբերի առաւօտուն հանդիպում ունեցաւ Լիբանանի Մարոնի համայնքի հոգեւոր պետ Պշարա Ռահի Պատրիարքին հետ։

Վեհափառ Յայրապետը, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Մեծի Տանն Կիլիկիոյ երէց միաբաններէն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեանի, միաբան ու հոգեւոր հայրերու ընկերակցութեամբ այցելութիւն մը տուաւ Լոս Անճելըսի մարոնիներու եկեղեցին եւ դիմաւորուեցաւ Պատրիարքին ու հոգեւոր հայրերու կողմէ։ Ռահի Պատրիարքին կողքին, հանդիպումին ներկայ եղան Արեւմտեան Միացեալ Նահանգներու եւ Պրազիլիոյ մարոնիներու առաջնորդները եւ երկու հոգեւորականներ։

Մեև ժամ տեւողութեամբ հանդհաումին րևթացքին, խորհրդակցութեան նիւթ եղան Լիբանանի ներքին կացութիւնը, Միջին Արեւելքի մէջ քրիստոնեաներու ներկայութեան ու ապագային կապուած հարցեր, ինչպէս նաեւ միջին արեւելեան եկեղեցիներու եւ սփիւռքի մէջ անոնց ցաւակներուն լարաբերութիւնները ամրապնդելու գործակցութիւնը զարգացնելու առաջադրանքները։ Երկու հովուապետները շեշտեցին քրիստոնեալ եկեղեցիներուն ու համալնքներուն միասնութեան կարեւորութիւնը եւ զանոնք աւելի եւս ամրապնդելու հրամալականը։ Վեհափառ Յալրապետը Ռահի Պատրիարքը տեղեակ պահեց գլխաւոր գիծերուն իր այն դասախօսութեան, գոր օր մր առաջ տուած էր UCLAի մէջ, Միջին Արեւելթի մեջ թրիստոնեաներու ապագային մասին, անդրադարձած էր իրադարձութիւններուն, շրջանի նորագոլն երեք միաստուածեան կոօնքներու միջեւ դարաւոր գուակցութեակ համակեցութեան իրականութեան, ցայն պահպանելու հրամայականին, ապա նաեւ բրիստոնեալ եկեղեցիներուն ու անոնց սփիւռքներուն միջեւ կապերուն ու գործակցութեան ամրապնդման անհրաժեշտութեան։

Մարոնիներու Պատրիարքը, իր կարգին, տեղեկութիւններ փոխանցեց շրջանիս մեջ իր ունեցած հանդիպումներուն ու անոնցմե բխող եզրակացութիւններուն մասին, որոնք կ'առնչուին յատկապես Լիբանանին ու ընդհանրապես Միջին Արեւելքին։ Յանդիպումեն ետք, հիւրընկալ ու հիւր հոգեւորականները անցան եկեղեցի, ուր միասնաբար աղօթքի պահ մը ունեցան։ Այնուհետեւ, անոնք կարճատեւ հարցազրոյց մը ունեցան լրագրողներու հետ։ Անոնք գնահատանքով արտայայտուեցան Քալիֆորնիոյ մեջ հայ ու մարոնի համայնքներուն գործակցութեան մասին ու քաջալերեցին, որ կապերը աւելի եւս զարգանան, գործակցութիւնը ամրապնդուի։

## HIS HOLINESS ARAM I AND HIS BEATITUDE BECHARA RAI MEET IN LOS ANGELES

On the morning of Saturday, October 15, 2011, His Holiness Catholicos Aram I met with His Beatitude Bechara Rai, Patriarch of the Lebanese Maronite Church.

His Holiness arrived at Our Lady of Lebanon Maronite Church in Los Angeles accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Yeprem Tabakian, and clergy. They were welcomed by Patriarch Rai, Bishops of the Maronite Dioceses of Los Angeles and Brazil, and clergy members.

The discussion centered on the current goings-on in Lebanon, the situation of Christians in the Middle East, and the relationship between Churches headquartered in the Middle East with their faithful in the Diaspora. Both spiritual leaders emphasized the importance of unity between Christian Churches and strengthened ties.

His Holiness gave His Beatitude a brief synopsis of the lecture he had presented a day before at UCLA on the future of Christianity in the Middle East. Patriarch Rai spoke of the meetings he has had during his visit to the United States, which are generally related to Lebanon and the Middle East.

After the hour long meeting, a prayer service was held inside the Cathedral. A brief interview followed, during which both His Holiness and His Beatitude spoke highly of the close relations between the Armenian and Maronite communities and called for more collaboration.